ՀԱՅԱՍՏԱՆԻ ԶԱՆԳՎԱԾԱՅԻՆ ԼՐԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԷԹԻԿԱՅԻ ԴԻՏՈՐԴ ՄԱՐՄԻՆ

Հայաստանի Հանրապետություն, 0002 Երևան, Ղազար Փարպեցի, 9բ
հեռ.՝ + 374 10 53 76 62, 53 35 41, 53 00 67, հեռապատճեն՝ + 374 10 53 56 61
Էլ. փոստ՝ meo@ypc.am

ԶԼՄ-ՆԵՐԻ ԷԹԻԿԱՅԻ ԴԻՏՈՐԴ ՄԱՐՄՆԻ ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄԸ

«Հայկական երկրորդ հեռուստաալիքի» եթերում 2022թ. սեպտեմբերի 16-ին «Հայելի ակումբ»-ի ուղիղ միացման ժամանակ, ինչպես նաև նույն օրվա «Պրոֆ Ֆակտ» հաղորդման ընթացքում հնչեցված առանձին արտահայտությունների առնչությամբ Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի դիմումի վերաբերյալ:

Դիտորդ մարմնի կազմը՝

Դավիթ ԱԼԱՎԵՐԴՅԱՆ
Նարինե ԱՎԵՏԻՍՅԱՆ
Ռուբեն ԲԱԲԱՅԱՆ
Շուշան ԴՈՅԴՈՅԱՆ
Կարինե ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Մեսրոպ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Արա ՂԱԶԱՐՅԱՆ
Աշոտ ՄԵԼԻՔՅԱՆ
Գնել ՆԱԼԲԱՆԴՅԱՆ
Բորիս ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ
Արա ՇԻՐԻՆՅԱՆ
Նունե ՍԱՐԳՍՅԱՆ
Անժելա ՍՏԵՓԱՆՅԱՆ
Գեղամ ՎԱՐԴԱՆՅԱՆ

Ա. ՓԱՍՏԵՐ

1. 2022 թ. սեպտեմբերի 20-ին ԶԼՄ-ների էթիկայի Դիտրդ մարմինը ստացել է Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի № 01-712 գրությունը «ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՀԵՌՈՒՍՏԱԱԼԻՔ» ՍՊԸ-ի կողմից հեռարձակվող «Հայկական երկրորդ հեռուստաալիք» տեսալսողական ծրագրի «Հայելի ակումբ»-ի 2022 թ. սեպտեմբերի 16-ի ուղիղ միացման ժամանակ հաղորդավար Անժելա Թովմասյանի, ինչպես նաև նույն օրվա «Պրոֆ Ֆակտ» (հեղինակ-վարող՝ Լիլիթ Մելքոնյան) հաղորդման հյուր Վահե Եփրիկյանի կողմից հնչեցված առանձին արտահայտությունների սղագրությունը և հաղորդումների՝ խնդրո առարկա հատվածների տեսագրությունը: ՀՌՀ-ն, ղեկավարվելով ԴՄ աշխատակարգի 4-րդ մասի 4.7 կետով, ակնկալում էր ստանալ ԴՄ դիրքորոշումը հնչեցված արտահայտությունների վերաբերյալ:

2. 2022 թ. հոկտեմբեր-դեկտեմբերին կայացած մի քանի նիստերում ԴՄ-ն անդրադարձել է դիմումը քննարկելու նպատակահարմարության հարցին: Քննարկումների ժամանակ հաշվի են առնվել հետևյալ հանգամանքները.

   ա) Մինչ սույն դիմումը՝ Դիտորդ մարմինը ՀՌՀ-ից 2021-2022 թթ. ստացել է Հ2 հեռուստաալիքին վերաբերող 5 դիմում և կայացրել է 4 եզրակացություն, որոնք ունեցել են նմանատիպ բնույթ և հասցեագրվել են մեծամասամբ «Հայելի ակումբ»-ի մամուլի ասուլիսների լուսաբանմանը:

   բ) 2022 թ. ընթացքում ԴՄ-ի և Հ2-ի ղեկավարության միջև տեղի է ունեցել ինտենսիվ հաղորդակցություն՝ ինչպես նամակների փոխանակմամբ, այնպես էլ ԴՄ նիստերում

քննարկումներին հեռուստաալիքի փոխտնօրենի մասնակցությամբ, որոնցում ի հայտ են եկել էական հակասություններ ինքնակարգավորման մարմնի և լրատվամիջոցի ներկայացուցիչների միջև՝ ԶԼՄ-ների էթիկայի կանոնագրի մեկնաբանման և ԴՄ-ի գործունեության վերաբերյալ։

գ) Հ2-ի դեմ նախորդ բողոքների վերաբերյալ կայացված եզրակացությունները որևէ ազդեցություն չեն ունեցել հեռուստաալիքի խմբագրական քաղաքականության վրա։

Բ. ԴԻՏՈՐԴ ՄԱՐՄՆԻ ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄԸ

Վերոնշվածը նկատի ունենալով՝

- ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմինը չի եկել ընդհանուր որոշման՝ Հ2-ի ներկայացուցիչների հետ լրացուցիչ քննարկումների և նոր դիմումի վերաբերյալ հերթական, նախորդների բովանդակությունը կրկնող եզրակացություն կազմելու մասին։

Միևնույն ժամանակ, Դիտորդ մարմինն արձանագրում է,

- որ խնդրո առարկա հաղորդումներին բնորոշ են էթիկայի կանոնագրի նույն խախտումները, ինչ մատնացույց են արվել նախորդ եզրակացություններում։ Մասնավորապես՝ դրանցում հնչում է ատելության և բռնության խոսք, և հեռարձակողը չի կիրառում որևէ միջոց դրանից խուսափելու ուղղությամբ։
- «Պրոֆ Ֆակտ» հաղորդման վարողը չի զգուշացնում հյուրին, ինչը կբխեր պրոֆեսիոնալ վարքագծի կանոններից, որ վերջինիս հայտարարությունները և բառապաշարն ակնհայտորեն հատում են թույլատրելի քննադատական դատողության սահմանը։ Իսկ «Հայելի ակումբ»-ի վարողն ինքն է թույլ տալիս մասնագիտական էթիկայի կոպիտ խախտումներ։

ԶԼՄ-ների Էթիկայի Դիտորդ մարմինը հայցում է Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի և Հ2 հեռուստաալիքի ներողամտությունը՝ դիմումին ֆորմալ առումով ուշ արձագանքելու համար։

Առաջացած խնդիրը հաղթահարելու նպատակով ԴՄ-ն առաջարկություններ է նախապատրաստում իր աշխատակարգում լրացումներ կատարելու ուղղությամբ, որոնք կներկայացվեն ինքնակարգավորման նախաձեռնությանը միացած լրատվամիջոցների առաջիկա ընդհանուր ժողովում։

Սույն պարզաբանումը չունի Դիտորդ մարմնի եզրակացության կարգավիճակ և բողոքի հասցեատեր լրատվամիջոցում պարտադիր հրապարակման ենթակա չէ։

Սույն պարզաբանումն ընդունվել է 2023 թ. ապրիլի 17-ին, ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմնի հետևյալ կազմով՝

Դավիթ ԱԼԱՎԵՐԴՅԱՆ, «Մեդիամաքս» լրատվական գործակալության գլխավոր խմբագիր

Նարինե ԱՎԵՏԻՍՅԱՆ, Վանաձորի «Լոռի» հեռուստաընկերության գործադիր տնօրեն

Ռուբեն ԲԱԲԱՅԱՆ, ռեժիսոր, Երևանի թատրոնի և կինոյի պետական ինստիտուտի պրոֆեսոր

Կարինե ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, «ԳԱԼԱ» հեռուստաընկերության գործադիր տնօրեն

Աշոտ ՄԵԼԻՔՅԱՆ, Խոսքի ազատության պաշտպանության կոմիտեի նախագահ

Գնել ՆԱԼԲԱՆԴՅԱՆ, «Նյումեգ» հրատարակչության գլխավոր խմբագիր

Բորիս ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ, Երևանի մամուլի ակումբի նախագահ

Արա ՇԻՐԻՆՅԱՆ, Հանրային հեռարձակողի խորհրդի նախագահ

Անժելա ՍՏԵՓԱՆՅԱՆ, Արմավիրի «Ալտ» հեռուստաընկերության խմբագիր, պրոդյուսեր

ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմինը ձևավորվել է ինքնակարգավորման նախաձեռնությանը միացած լրատվամիջոցների կողմից, որոնք այս պահին թվով 71-ն են: ԴՄ-ն իր եզրակացություններում ղեկավարվում է Հայաստանի լրատվամիջոցների և լրագրողների էթիկական սկզբունքների Կանոնագրով, որն ընդունվել է 2007 թվականի մարտի 10-ին, վերախմբագրվել՝ ինքնակարգավորման նախաձեռնությանը միացած լրատվամիջոցների 2015 թվականի մայիսի 16-ի ընդհանուր ժողովում: